

**ՏԻՉԻԿԱ /7-րդ դասարան - Առաջադրանք 3/**

**Թեմա – Նյութի խտություն: Ծանրության ուժ: Կշիռ: Առաձգականության ուժ: Շփման ուժ:**

**Առաջադրանք**

1. Լրացրեք աղյուսակը՝ յուրաքանչյուր պնդման դիմաց համապատասխան վանդակում կատարելով <<+>> նշումը.

Խտությունը ...		ՊՆԴՈՒՄ	ՃԻՇՏ Է	ՍԽԱԼ Է
	1	Կախված է նյութի ջերմաստիճանից		
	2	Ֆիզիկական մեծություն է		
	3	ՄՀ-ում չափվում է կգ/մ <sup>3</sup> -ով		
	4	Կախված է տվյալ մարմնի զանգվածից		
	5	Կախված է տվյալ մարմնի ծավալից		
	6	Կարող է չափվել գ/սմ <sup>3</sup> -ով		
	7	Գազերի մոտ սովորաբար ավելի փոքր է, քան պինդ մարմինների		
	8	Հաշվվում է զանգվածի և ծավալի հարաբերությամբ		
	9	Տարբեր նյութերի մոտ տարբեր է		
	10	Հեշտությամբ փոխվում է գազերի սեղմման ժամանակ		

2. Լրացրեք աղյուսակը՝ յուրաքանչյուր պնդման դիմաց համապատասխան վանդակում կատարելով <<+>> նշումը.

ԿՇԻՈՒՄ...		ՊՆԴՈՒՄ	ՃԻՇՏ Է	ՍԽԱԼ Է
	1	Միավորների ՄՀ-ում չափվում է նյուտոնով		
	2	Միշտ ուղղված է դեպի վերև		
	3	Այլ կերպ անվանում են զանգված		
	4	Միշտ հավասար է ծանրության ուժին		
	5	Կարող է հավասար լինել ծանրության ուժին		
	6	Կիրառված է հենարանի կամ կախոցի վրա		
	7	Այն ուժն է, որով մարմինը Երկրի ձգողության հետևանքով ազդում է անշարժ հորիզոնական հենարանի կամ ուղղաձիգ կախոցի վրա		
	8	Հավասար է գրոյի, երբ մարմինն ազատ անկում է կատարում		
	9	Հաշվվում են $P=mg$ բանաձևով, եթե մարմինը գտնվում է անշարժ հորիզոնական հենարանի վրա		
10	Իր բնույթով առաձգականության ուժ է			

3. Քանի՞ ուղերթ պետք է կատարի 3տ բեռնատարողությամբ բեռնատար ավտոմեքենան 20մ<sup>3</sup> ծավալով ցեմենտ տեղափոխելու համար: Ցեմենտի խտությունը 2800կգ/մ<sup>3</sup> է:

4. 2կգ զանգվածով փայտե չորսուն հավասարաչափ քաշում են հորիզոնական դրված փայտե տախտակի վրայով՝ 100Ն/մ կոշտություն ունեցող զսպանակով: Ջսպանակն ունի հորիզոնական դիրք: Որոշեք զսպանակի երկարացումը, եթե տախտակի և չորսուի միջև շփման ուժը կազմում է չորսուի կշռի 0.3 մասը:

5. Սահնակը պոկվում է տեղից, եթե նրա վրա հորիզոնական ուղղությամբ ազդում է 90Ն ուժ: Ինչքա՞ն է սահնակի զանգվածը, եթե շփման ուժը կազմում է նրա կշռի 0,045 մասը:

6. Մարմնի նույն կետում կիրառված են 3Ն և 4Ն ուժեր: Պատկերեք այդ ուժերի այն դասավորություն-ներ (մասշտաբն ընտրեք ինքնուրույն), որի դեպքում դրանց համագործը հավասար է 7Ն և 1Ն:

7. Սահնակը ձյան վրայով հավասարաչափ շարժելու համար պետք կիրառել 25Ն հորիզոնական ուղղված ուժ: Որոշեք սահնակի զանգվածը, եթե շփման ուժը կազմում է նրա կշռի 0,03 մասը:

8. Ինչքա՞ն կլինի 500Ն/մ կոշտությամբ ձկան թելի երկարացումը, երբ նրանով հավասարաչափ քարձրացնում են 200գ զանգվածով ձուկը: